ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՀՀՔԿԴ-ՊԸԱՇՁԲ -16/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումներ կատարելու պարզեցված ընթացակարգով ՀՀ Արարատի մարզի, Մասիսի քննչական բաժնին հատկացված Մասիսի քաղաքապետարանի շենքի 2-րդ հարկի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.11.2016թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ, Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Վ.Հարությունյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Ռ.Խաչատրյանը

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **<Խաչ -Կար Շին> ՍՊԸ (ՀՀ Արմավիրի մարզ, գ.Մերձավան, Երևանյան ԾՃՂ.Շ.15/28)**
2. **<ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ> ՍՊԸ (ՀՀ Գեղարքունիքի մարզ,գ. Զոլաքար)**
3. **<Վ. Վարդանյան> ՍՊԸ (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Գեղարդի 1-53)**
4. **<Ագարակ> ԲԲԸ (ՀՀ Արագածոտնի մարզ գ.Փարպի)**
5. **<Գամշին> ՍՊԸ (ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Բաբաջանյան 1)**
6. **<Վահագն-94> ՍՊԸ (ՀՀ Արարատի մարզ,ք. Վեդի, Ն. Ստեփանյան 17)**
7. **<Նեմրութ> ՍՊԸ (ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր, Լազյան 9)**
8. **<ՌԱՖ ՇԻՆ> ՍՊԸ (ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Մայիսյան 77)**
9. **<ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Պ.Սևակի 1/51)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 01.11.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **<Ագարակ> ԲԲԸ, <Գամշին> ՍՊԸ** կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում/հայտում առկա փաստաթղթերում/ կան թերություններ, մասնավորապես՝

3.2.1 **<Խաչ -Կար Շին> ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 9 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրում բացակայում է 18.ա. կետով նախատեսված վճարողի ստորագրությունը, ինչպես նաև բոլոր հավելվածներում չի պահպանվել հրավերով նախատեսված օրինակելի ձևերը. հանված է Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) :

3.2.2 **<ԱՐԱՄԱՆ ՍԹՈՒՆ ՍԹԱՅԼ> ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի բոլոր հավելվածներում չի պահպանվել հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահանջը՝ էլեկտրոնային թվային ստորագությունը անիրական է: Մասնակցի գնային առաջարկի մեջ տառերով և թվերով գրված առաջարկված ընդհանուր գինը չի համապատասխանում իրար. ներկայացվել է 14388000 ՀՀ դրամ, սակայն տառերով գրվել է տասնչորս միլիոն երեք հարյուր ութսունութ ՀՀ դրամ: Մասնակիցը հավաստելով, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, ներկայացրել է 3.5 Հավելվածը և 3.1 Հավելվածում նշված չէ , թե ինչ բնույթի աշխատանքներ է իրականցրել:

3.2.3 **<Վահագն-94> ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 9 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրում 4. կետով նախատեսված վճարողի բանկի անվանման փոխարեն գրված է կազմակերպության հասցեն:

3.2.4 **<Նեմրութ> ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 9 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը՝ չի պահպանվել հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահանջը:

3.2.5 **<Վ. Վարդանյան> ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 9 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագիրն ներկայացված է առանց էլեկտրոնային թվային ստորագրության՝ չի պահպանվել հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահանջը:

3.2.6 **<ՌԱՖ ՇԻՆ> ՍՊԸ** կողմից ներկայացված փաստաթղթերում չի պահպանվել հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահանջը:

3.2.7 **<ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի բոլոր հավելվածներում չի պահպանվել հրավերի 1-ին մասի 7.9 կետի պահանջը՝ էլեկտրոնային թվային ստորագությունը անիրական է: Մասնակցի կողմից ներկայացված հավելված 3.3-ը ներկայացված է թերի՝ բացակայում է ընթացակարգի հրավերով սահմանված կարգով հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու հավաստումը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

ՀՀ Արարատի մարզի, Մասիսի քննչական բաժնին հատկացված Մասիսի քաղաքապետարանի շենքի 2-րդ հարկի մասնակի վերանորոգման աշխատանքների

Նախահաշվային գինն է 18004600 ՀՀ դրամ:

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
1	<Խաչ -Կար Շին> ՍՊԸ	11087600
2	<ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ> ՍՊԸ	11666990
3	<Վ. Վարդանյան> ՍՊԸ	13679171
4	<Ագարակ> ԲԲԸ	11104167
5	<Գամշին> ՍՊԸ	11600000
6	<Վահագն-94> ՍՊԸ*	10230000
7	<Նեմրութ> ՍՊԸ	10890000
8	<ՌԱՖ ՇԻՆ> ՍՊԸ	14208000
9	<ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ*	17820830

* Կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **<Խաչ -Կար Շին> ՍՊԸ, ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ> ՍՊԸ, <Վ. Վարդանյան> ՍՊԸ , <Վահագն-94> ՍՊԸ, <Նեմրութ> ՍՊԸ, <ՌԱՖ ՇԻՆ> ՍՊԸ, <ՆԱՄԵՆԱՍԵԴ> ՍՊԸ - ի կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 44-րդ կետի 4-րդ ենթակետը և 45-րդ կետը:

2. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **<Ագարակ> ԲԲԸ –ին**:

3. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **<Գամշին> ՍՊԸ –ին**:

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Պետրոսյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Վ. Հարությունյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ.Խաչատրյան